ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԵՒ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ

1) Ղուբու փոստային ճանապարհում կառուցուած է մի նոր փայտէ կամուրջ և նորոգուած է երեք քարէ կամուրջ, բոլորը 774 ր. գործ։

2) Նոյն ճանապարհում շինուած է մի նոր քարէ կամուրջ, որի վրայ ծախսուած է 1709 ռուբլի 48 կոպէկ։

3) Աղսուի խճուղու նորոգութիւնը տուած է տարեկան 6,930 ռուպ. կապալով[1])։

4) Բացի դորանից ժողովրդին պարտաւորեցրած է եղել միշտ յարմարութեան մէջ պահել հաղորդակցութեան հասարակ ճանապարհները։

ԲԺԻՇԿՆԵՐ

Ներկայ 1891 թուին քաղաքական տեսչութեան մէջ եղած Բագուի նահանգի բժիշկների թիւն եղել է 45, սոցա թուում 3 կին բժիշկ։ Մի բժիշկը գալիս է 17,279 հոգի բնակիչների։ Այս 45 բժիշկներից՝

Բժշկական մասնախմբի անդամներ	3
Գաւառական բժիշկներ . . .	7
Քաղաքական	5
Հիւանդանոցի	6
Մաքրապահական . . .	1
Գիւղական	4
Երկաթուղային	2
Ուսումնարանակ հիմնարկութիւններում	1
Մասնաւոր գործարաններում . .	3
Անկախ բժիշկներ	13
բոլորը	45

Նախընթաց տարուանից բժիշկների թիւը աւելացել է մէկով։

---

[1]) Քիւրդամիրից մինչեւ Աղսու գնացող ալքունի ճանապարհի խճուղի պատրաստելը 1891 թուիցը կապալաւ տուած լինելով՝ 1893 թուի աշնանը —սեպտ. հոկտ. սկսուեց և շարունակւում է։